ցուածք մը քարով հիւսուած էր։ Այն դուռը որմէ մտանք, կը թուի թէ յետոյ բացուած էր. մոմի լուսով հազիւ կրցանք այս-չափ տեղեկութիւն քաղել։ Շէնքը այժմ վագֆ է և կը վերաբերի իսլամաց։ Աստուածատուր եպս.ի գրածին նայելով մինչև Սալահէտտին (ԺԲ. դար) այս եկեղեցին գոյութիւն ունեցած է եւ յետոյ խափանուած, և այս պարագան հաւանական կը նկատուի. վասն զի, ինչպէս գիտենք, Սալահէտտին Երուսաղէմի գրաւումէն յետոյ շատ եկեղեցիներ մզկիթի եւ մէտրէսէի վերածեց, ինչպէս Ս. Յովակիմ և Աննայի հայոց վանքը և ուրիշներ. շատ եկեղեցիներ ու վանքեր ալ, իբր վարձատրութիւն պարգևեց այն յաղթական զօրավարներուն՝ որ իրեն հետ պատերազմի մասնակցած էին. հաւանական է որ Գազաւոնի վանքն ալ նոյն վիճակին հանդիպած է։ Եկեղեցիին այս շէնքը առաջ խան է եղեր, յետոյ ձիթապտուղի չտեմարան և ի վերջոյ օճառի գործարան. այժմ գրեթէ պարապ։ Իսկ շէնքին կից արևմտեան ճանապարհին վրայ 35–40 տարի առաջ շինուած են վագֆի կրպակներ, այնպէս որ եկեղեցիին շէնքը՝ ճանապարհի կողմէն անշմարելի կը մնայ։

2. Ո՞վ շինեց Գազաւոնի վանքը.

Երուսաղէմի հայոց հին վանօրայք ընդհանրապէս կը յիշատակուին իրենց հիմնադիրներուն անունով, շատ քիչեր են որ իրենց իսկական անունով կը յիշուին, այդ քիչերէն է Գազաւոնի վանքը որ կը կրէ թէ հիմնադիրին եւ թէ վանքին անունը։ Գազաւոն կամսարական անուն մըն է. նոյն նախարարութիւնը ունեցած է Գազաւոն անուամբ երեք պատմական անձեր.

Ա. Գազաւոն, որդի Սպանդարատի, 386ին (Խորենացի Գ. ԽԲ).

Բ. Գազաւոն, որդի Հրահատի, 426ին (Խորենացի Գ. ԿԵ.).

Գ. Գազաւոն, հայր Զաւրակի, Զ. դար (Գիրք Թղթոց, էջ 74)։

Պատմական պարագաները դիտելով՝ հաւանական չէնք գըտներ որ Բ. և Գ. Կամսարական Գազաւոնները հիմնարկած ըլլան յիշատակուած վանքը, վասն զի անոնք հեռի կը գտնուէին յունական կայսրութեան սահմաններէն. աւելի շատ հաւանականութիւն ունի Ա. Գազաւոնը, նախ որ տղայութեան օրերուն քաղաքական պատճառներով իր մօրը հետ ապաստանած է յու-